Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

Ն. Ա. Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ՄՈՒԹԱՖԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ

ՀԱՅ ՊՈԼԻՍ

Կոստանդնուպոլսի հայ գաղութի պատմութիւնը սկիզբ է առնում Բիւզանդական կայսրութեան կազմաւորման շրջանից:

«Միայն սա իրողութիւնը, որ 610էն 1056ը Բիւզանդիոնի գահուն վրայ բազմող զանազան ազգէ կայսրերուն երեք քառորդը Հայեր են, խիստ յատկանշական է և գաղափար մը կրնայ տալ Հայոց դիրքին և կարևորութեան վրայ: Հայերը, սակայն, միայն կայսրեր և կայսրուհիներ չեն տուած Բիւզանդիոնին, այլ նաև բազմաթիւ քաջ ռազմիկներ, հռչակաւոր զօրավարներ, վարիչ քաղաքական դէմքեր, նշանաւոր և հեղինակաւոր մտաւորականներ, Ցոյն եկեղեցիին ծառայող կրօնաւորներ» (Ա. Ալպօյաճեան):

1453 թ. գրաւելով Կոստանդնուպոլիսը՝ սուլթան Մուհամմէդ Ֆաթիհը մեծ թուով հայեր բռնագաղթեցրեց մայրաքաղաք: Աւերուած քաղաքը հայ շինարար բազկի կարիքն ունէր: Սուլթանի յաջորդները շարունակաբար տարբեր վայրերից հայ արհեստաւորներ էին տեղափոխում Կոստանդնուպոլիս: Այնուհետև Կ.Պոլսի հայ բնակչութիւնը սկսեց աճել՝ ընդունելով նաև մեծ թուով գաղթականութիւն:

1461 թուականին Մուհամմէդ Ֆաթիհը Կոստանդնուպոլսի Հայոց կրօնապետ կարգեց Յովակիմ եպիսկոպոսին՝ նրան շնորհելով այն իրաւասութիւնները, որ ունէր Յունաց Տիեզերական պատրիարքը: Այսպիսով, սկիզբ դրուեց Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան, որի վարչական-եկեղեցական իշխանութիւնը հետզհետէ ընդարձակուեց: Դառնալով Թուրքիոյ Հայոց հոգևոր կենտրոնը՝ այն պիտի դառնար ողջ արևմտահայութեան քաղաքական, տնտեսական և մտաւոր կեանքի առանցքը և վճռորոշ դեր պիտի կատարէր նաև համայն հայութեան կեանքում:

Այս դարերի ընթացքում աւելի քան 80 պատրիարքներ նստեցին Պոլսոյ Աթոռին: Յատկապէս Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցին, Յակոբ Նալեան Զմմառացին, Մկրտիչ Խրիմեանը, Ներսէս Վարժապետեանը, Մատթէոս Իզմիրլեանը, Մաղաքիա Օրմանեանը, Գարեգին Խաչատուրեանը, Շնորհք Գալուստեանը ազգանուէր, եկեղեցաշէն գործունէութեամբ փառքով պսակեցին իրենց գահակալութեան շրջանը:

Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցին (1678-1741) արևմտահայութեան մտաւոր զարթօնքի սկզբնաւորողը եղաւ: Նրա պաշտօնավարութեան շրջանում տպագրուել է շուրջ 100 անուն գիրք: Բազում եկեղեցիների շինութեան և վերաշինութեան համար Կ.Պոլիսը Յովհաննէս Կոլոտին է պարտական: Նա Գումգափուի Մայր եկեղեցուն կից հիմնեց Կ.Պոլսի առաջին մատենադարանը: Նրա շնորհիւ ամրացան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան խարխլուած հիմքերը: Կոլոտը հիմնեց Կ.Պոլսի առաջին խոշոր ուսումնարանը: Յովհաննէս Կոլոտի գործը շարունակեց և լրացրեց նրա աշակերտը՝ Յակոբ Նալեան պատրիարքը: «Եւ գուցէ Կոլոտի առաջացրած գրական-կրթական շարժումը խլանար Նալեանի մահից յետոյ, եթէ չլինէր Բաղդասար Դպիրը, որ դեռ Կոլոտի ժամանակից յայտնի էր դարձել իբրև հմուտ հայկաբան և վարժապետ» (Լէօ): Բաղդասար Դպիրը (1683-1768) գործուն մասնակցութիւն է ունեցել Կ.Պոլսի մանկավարժական և գրահրատարակչական աշխատանքներին: Որպէս բանաստեղծ՝ նա իր արժանաւոր տեղն ունի ուշ միջնադարեան հայ տաղերգուների շարքում: «Պոլիսն ունեցաւ հմտութեան և տքնութեան նոր բարձրունք մը՝ Գէորգ Պալաթեցին» (Յ. Սիրունի): Գէորգ Դպիր Պալատեցու գլուխգործոցը պարսկերէն-հայերէն բառարանն էր, նա «Իլիական»ի թարգմանիչն էր և հայ առաջին հոմերագէտը:

Կ.Պոլսի դպրոցները, տպարանները, բարեգործական հաստատութիւնները մարմին էին առնում և զարգանում Պատրիարքարանի հովանու տակ: Կ.Պոլսի առաջին տպարանը հիմնեց Աբգար Թոխաթեցին 1567թ.: Հարիւրամեայ դադարից յետոյ Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանը (1637-1695) հիմնեց նոր տպարան: Սա-

Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցի

կայն հայ մշակոյթի պատմութեան մէջ նա առաւելապէս մնաց իբրև խոշոր բանաստեղծ, գիտնական և հասարակական գործիչ:

Հայ տպագրութիւնը Կ.Պոլսում հաստատուն հիմքերի վրայ դրուեց 1690-ականներին՝ Դ. Մարզուանեցու և Ա. Կոստանդնուպոլսեցու մշտական գործող տպարաններով: Պօղոս Արապեանը պոլսահայ տպագրութեան խոշորագոյն դէմքերից է և իր 70-ամեայ գործունէութեամբ յայտնի է որպէս տպագրիչ-հրատարակիչ, գրաձուլիչ, փորագրիչ և նորատեսակ տառերի ստեղծող: Յովհաննէս Միհէնտիսեանի տպարանը ամենակատարեալն էր ամբողջ Մերձաւոր Արևելքում: Ճանիկ Արամեանը խոշոր դեր կատարեց տպագրական արուեստի զարգացման գործում: Արամեանի տպագրական տառերը օգտագործուում են մինչև այժմ և յայտնի են ստեղծողի անունով: Մինչև 1800 թվականը տպագրած հայերէն գրքերի քանակով

Մկրտիչ Խրիմեան

Մաղաքիա Օրմանեան

Կ.Պոլիսն առաջինն էր, իսկ 19-րդ դարում իր 130-ից աւելի տպարաններով հայ իրականութեան մէջ այն կրկին մնաց առաջատարը:

Կ.Պոլիսը ոչ միայն հայ տպագրութեան, այլև դպրութեան խոշորագոյն կենտրոն եղաւ: Այստեղ եկեղեցիներին կից միշտ գործել են տարրական դպրոցներ, որոնք նախնական գիտելիքներ էին տալիս հոգևորական կոչման պատրաստուող երիտասարդներին: Դարեր ի վեր զրկված լինելով պետական հովանաւորութիւնից՝ ժողովուրդը սեփական միջոցներով է պահել իր կրթական օջախները: Կ.Պոլսի անդրանիկ թաղային վարժարանը հիմնուեց Մկրտիչ ամիրա Միրիջանեանի միջոցներով: Նրա օրինակին հետևեցին պոլսահայ միւս ամիրաները: Ամիրայական սերնդի առաքինութիւնների մարմնացում էր Յարութիւն Պէզճեանը (1771-1834), որի գործունէութեան շրջանը ժամանակի պատմագիրները անուանում են «Պէզճեան դար»:

19-րդ դարի սկզբից ստեղծուեցին բազմաթիւ բարեգործական կազմակերպութիւններ: Դրանք ստանձնեցին հայկական դպրոցների պահպանման նիւթական բեռը: Կ.Պոլսի դպրոցներից յայտնի էին Սկիւտարի ճեմարանը, Պէզճեան, Ներսէսեան, Արամեան, Լուսաւորչեան, Մաքրուհեան, Ագապեան, Էսաեան վարժարանները: Արդիւնաւէտ եղաւ յայտնի մանկավարժ Ռէթէոս Պէրպէրեանի հիմնադրած վարժարանը, իսկ Կ.Պոլսի կեանքում նշանակալից պիտի դառնար Ներսէս Վարժապետեանի նախաձեռնութեամբ և Մինաս Չերազի տեսչութեամբ Կեդրոնական վարժարանի հիմնադրումը:

1889 թ. Խորէն Աշըգեան պատրիարքի հովանաւորութեամբ և Մաղաքիա Օրմանեանի վերատեսչութեամբ Արմաշում հիմնուեց Կ.Պոլսի Հայոց Պատրիարքութեան Արմաշի դպրեվանքը:

Պոլսահայերը առանձնակի հոգատարութեամբ են վերաբերուում Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցին: Այն միայն հիւանդանոց չէ, այլ կրթական հաստատութիւն՝ իր ճեմարանով, որբանոցով, տպարանով,

Պէշիկթաշի Ս. Աստուածածին եկեղեցին

Խաչքար (1733)
Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում

«Ընդարձակ տարեցոյց»ով: 1832 թուականին Յ. Պէզճեանի հիմնադրած այս հաստատութիւնը պոլսահայերի աջակցութեամբ կատարելագործուեց ժամանակի գիտութեան և առողջապահութեան պահանջների համաձայն և գործում է մինչև այսօր:

Ազգային վարժարաններից բացի Կ.Պոլսում գործում էին Վենետիկի Մխիթարեանների Գատըգիւղի և Բերայի վարժարանները և Վիեննայի Մխիթարեանների Բանկալթի թաղամասի լիցեյը: Մխիթարեան դաստիարակների ազգասիրութեամբ ներշնչուած շատ սերունդներ հայ վերածննդի առաջամարտիկները եղան:

1853 թուականին ստեղծուած Ուսումնական խորհուրդը ուղղութիւն տուեց կրթական գործին, վարժարաններն ունեցան իրենց կանոնադրութիւնը և ուսումնական ծրագրերը: Կրթական շարժման վերելքին իրենց նպաստը բերեցին Կ.Պոլսի մանկավարժական ու մանկական հանդէսները: Բարելաւուեցին դպրոցական ընթերցարաններն ու դասագրքերը: Լայն ճանաչում ունէին Մ. Գարագաշեանի, Գ. Սրուանձտեանի, Մ. Մամուրեանի, Ե. Տէմիրճիպաշեանի, Հ. և Զ. Ասատուրների, Ռ. Զարդարեանի ընթերցարանները: Փառահեղ սերունդներ դաստիարակեցին կրթական մշակներ Յ. Մալէզեանը, Գ. Փեշտիմալճեանը, Ս. Փափազեանը, Մ. Մեզպուրեանը, Մ. Գարագաշեանը, Յ. Հիսարեանը, Թ. Թերզեանը, Ս. Թոլեանը, Մ. Զերազը, Յ. Գուրգէնը, Ռ. Պէրպէրեանը:

19-րդ դարի սկզբից Կ.Պոլսում հիմնուած թաղային դպրոցների թիւը տատանւում էր 40-ի շուրջ: Տարբեր տարիներին գործել են նաև մօտ 50 մասնաւոր դպրոցներ:

Գրիգոր Օտեանի, Նահապետ Ռուսինեանի, Սերովբէ Վիչէնեանի և Նիկողայոս Պալեանի մշակած ազգային, մշակութային

Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցը

և հանրային կեանքին վերաբերող կանոնադրութիւնը, որը կոչւում էր Ազգային սահմանադրութիւն, 1860 թուականին ընդունուեց Կ. Պոլսի Ազգային ժողովի կողմից: Սահմանադրութիւնը կարևոր էջ էր արևմտահայ հասարակական մտքի և քաղաքական պայքարի մէջ:

Հայ Պոլիսը, որ միշտ աւիւն է ստացել մայր երկրից եկող թարմ աւիշով, Ազգային սահմանադրութիւնից և Զէյթունի հերոսական ապստամբութիւնից յետոյ՝ Մկրտիչ Խրիմեանի հզօր շնչի ազդեցութեան տակ, իր հայեացքն ուղղեց դէպի անտեսուած հայկական ոստանները և սկսեց ապրել դրանց հոգսերով: Պատրիարքարանում ստեղծուած «Գաւառաց Տառապելոց ընկերութեան» (1862), «Հայաստանի Սովելոց Խնամատար Յանձնախումբի» (1880) նպատակը գաւառի պաշտպանութիւնն ու առաջադիմութիւնն էր: Ստեղծուեցին բազմաթիւ այլ ընկերութիւններ, որոնք ձգտում էին Արևմտեան Հայաստանում կրթական գործը զարգացնել: Դրանցից խոշորագոյնները կապեր հաստատեցին հայութեան միւս հատուածի հետ և հիմնական հասոյթները ստանալով Կովկասից՝ շուրջ 60 վարժարան հիմնեցին գաւառներում:

«Դպրոցասէր Տիկնանց» և «Ազգանուէր հայուհեաց» կրթական ընկերութիւնների ստեղծումը արդիւնք էր այն մեծ շարժման, որ սկսել էին Կ.Պոլսի հայ կանայք: Այդ ընկերութիւնների ոգին էին գրողներ Սրբուհի Տիւսաբը, Զապել Ասատուրը, Արշակուհի Թէոդիկը, որոնց շուրջ հաւաքուել էին անձնուէր և գործունեայ հայուհիներ: «Դպրոցասիրաց»ը Կ.Պոլսում բացեց Դպրոցասիրաց Տիկնանց վարժարանը, որը պիտի հոչակուէր իր գործունէութեամբ, կազմակերպեց հայկական առաջին ցուցահանդէսը՝ Յովհաննէս Այվազովսկու մասնակցութեամբ, որն այս ընկերութեան անդամ էր:

19-րդ դարի սկզբից մինչ 20-րդ դարի

Արմաշի դպրեվանքը և Զարիւափան Ս. Աստուածածին եկեղեցին

Ս. Սոֆիա տաճարի գմբէթը (989-992)
Ճարտարապետ՝ Տրդատ

սկիզբը Կ.Պոլսում գործել են 350 մշակութային ընկերութիւններ:

1862 թուականին ստեղծուած «Քնար հայկական» երաժշտական ընկերութիւնը առաջինն էր Կ.Պոլսում, ողջ հայութեան և Մերձաւոր Արևելքի մշակութային կեանքում: Նպատակն էր «երաժշտութեան ոգին արթնացնել ազգին մէջ», որի իրականացման համար նախաձեռնող Գաբրիէլ Երանեանը և անդամներ Տ. Չուխաճեանը, Ն. Թաշճեանը, Հ. Զէրչեանը և այլք դասախօսութիւններ էին կազմակերպում, իսկ ընկերութեան 35 հոգուց բաղկացած սիմֆոնիկ նուագախումբը ձրի համերգներ էր տալիս Կ.Պոլսի թաղերում: Գ. Երանեանը հրատարակում էր ընկերութեան «Քնար հայկական» երաժշտական հանդէսը, ուր հայկական և եւրոպական նոտագրութեամբ լոյս էին տեսնում հայրենասիրական երգեր: Նա հրատարակել է նաև եւրոպական նոտագրութեամբ հայերէն առաջին «Քնար արևելեան» երաժշտական հանդէսը:

Հայ երաժշտութեան մէջ նշանակալից իրադարձութիւն էր Համբարձում Լիմոնճեանի կողմից հայկական նոտագրութեան ստեղծումը, որն անցումային փուլ էր խազային նոտագրութիւնից գծային նոտագրութեան, որի շնորհիւ ձայնագրուեց, պահպանուեց ազգային ժողովրդական և հոգևոր երաժշտութեան պատկառելի ժառանգութիւնը: Ձայնագրութեան նախաձեռնողը Պատրիարքարանում 1864 թուականին ստեղծուած երաժշտական յանձնաժողովն էր, որի աշխատանքներին մասնակցեցին ժամանակի ամենաակնաւոր երաժիշտները, որոնցից առաւել մեծ արդիւնքի հասան Ե. Տնտեսեանն ու Ն. Թաշճեանը:

1870-ականներին Յ. Վարդովեանի, Ե. Մելիքեանի և Ս. Պէնկլեանի նախաձեռնութեամբ ստեղծուեցին Մերձաւոր Արևելքի առաջին դրամատիկական-օպերային խմբերը, որոնք իրենց խաղացանկում ընդգրկեցին Տ. Չուխաճեանի և արևմտաեւրոպական կոմպոզիտորների ստեղծագործութիւնները: Կ.Պոլսում յայտնի էր Սինանեանների երաժշտական ընտանիքը, որը մեծ նուաճումների էր հասել երաժշտական-կատարողական արուեստում:

Տիգրան Չուխաճեանի ստեղծագործութիւնը համարւում է արևմտահայ երաժշտարուեստի գագաթը: Նա առաջին հայ կոմպոզիտորն էր, որ մասնագիտական կրթութիւն է ստացել Եւրոպայում: Չուխաճեանը դարձաւ հայկական առաջին օպերաների և օպերետների, ռոմանսների և գործիքային ստեղծագործութիւնների հեղինակը, երաժշտական առաջին թատրոնի հիմնադիրն ու կազմակերպիչը արևմտահայ իրականութեան մէջ՝ դնելով երաժշտական թատրոնի հիմքերը Թուրքիայում և ամբողջ Մերձաւոր Արևելքում:

Սուլէյմանիէ մզկիթը (1550-1557)
Ճարտարապետ՝ Սինան Մեծ

Դոլմաբահչէ պալատը (1856)
Ճարտարապետ՝ Կ. Պալեան

Խաչքար
Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում

Պոլսահայ երգահանները հայ երաժշտարուեստը հարստացրին Զէյթու-

Կեդրոնական վարժարանի շրջանաւարտները (1891)

Էսայեան վարժարանի շրջանաւարտները (1903)

հրաշալի երգերով, որոնք որպէս զէնք պիտի ծառայէին ազգային-ազատագրական պայքարում:

1864 թուականին Յովհաննէս Գասպարեանի ջանքերով Կ.Պոլսում հիմնադրուեց Արամեան թատրոնը՝ հայ առաջին պրոֆեսիոնալ թատրոն-կրկէսը: Այն միակն էր Մերձաւոր Արևելքում և շուրջ 20 տարի յաջողութեամբ գործեց թէ՛ Թուրքիայում, թէ՛ Կովկասում:

1810-ականներից Մխիթարեանները ներկայացումներ էին կազմակերպում Կ.Պոլսի իրենց դպրոցներում: Դպրոցական ներկայացումների հիման վրայ դարակէսից ստեղծւում են թաղային սիրողական թատերախմբեր: Ալթունեան եղբայրների ջանքերով 1861 թ. հիմնուեց «Արևելեան թատրոնը»՝ նոր ժամանակների հայ առաջին պրոֆեսիոնալ դրամատիկ թատրոնը: Թատրոնի առաջնակարգ դերասանները՝ Թ. Ֆասուլաճեանը, Պ. Մաղաքեանը, Մ. Մնակեանը, Ս. Պէնկլեանը, Յ. Վարդովեանը և Ս. Էքշեանը «Արևելեան թատրոն»ի փակուելուց յետոյ ստեղծելով իրենց խմբերը՝ ղեկավար դեր պիտի կատարէին արևմտահայ բեմում:

Թատերական ընկերութիւններով ողողուած էր Կ.Պոլիսը: Այս ընկերութիւնների գործունէութիւնը և Ա. Հայկունու հիմնած «Մուսայք Մասեաց» թատերական շաբաթաթերթը իրենց նպաստը բերեցին թատերական արուեստի զարգացմանը:

1866 թուականին Թովմաս և Պայծառ Ֆասուլաճեանները ուղևորուեցին Կովկաս՝ կամուրջ նետելով հայութեան զոյգ հատուածների միջև: Նոյն առաքելութիւնը

Տայեան վարժարանի սաները

կատարեցին Գ. Զմշկեանի հրաւէրով Թիֆլիս մեկնած Պ. Ադամեանը, Սիրանոյշը, Աստղիկը, Երանուհի և Վերգինէ Գարագաշեանները, Մ. Նուարդն ու Մ. Մնակեանը:

1868 թուականին Յ. Վարդովեանը «Արևելեան թատրոն»ի դերասանական ուժերով Կետիկ-փաշա թաղամասում թատերախումբ կազմեց, որը դարձաւ Թուրքիայի միակ պետական և Մերձաւոր Արևելքի ամենամեծ և կայուն ծրագրով գործող թատրոնը: Կ.Պոլսի թատրոնների շուրջ զարգացաւ արևմտահայ թատերգութիւնը: Մկրտիչ Պէշիկթաշլեանը, Թովմաս Թերզեանը, Պետրոս Դուրեանը հանդէս եկան հայ պատմական անցեալը պատկերող ողբերգութիւններով, իսկ Յակոբ Պարոնեանը փայլեց իր կատակերգական թատերախաղերով:

Կ.Պոլսի թատրոնները եղել են դերասանների պատրաստման և հասունացման իւրօրինակ դպրոց: Այստեղ ձևաւորուեց դերասանական մի համաստեղութիւն, որոնցից շատերը մեծ հռչակ ձեռք բերեցին, իսկ Պետրոս Ադամեանն ու Սիրանոյշը հասան համաշխարհային համբաւի:

Քաղաքական աննպաստ պայմանները Կ.Պոլսի հայ թատրոնին ստիպեցին իր ուժերը նուիրել թուրքական բեմին: Պոլ-

Դպրոցասիրաց Տիկնանց վարժարանի սաները (1914)

Պետրոս Ադամեան

Սիրանոյշ

սահիայ թատրոնը մի կարճ շրջան նորից պիտի ծաղկէր «Պոլսահայ դրամատիկ»ի գործունէութեամբ (1919-1923) և իր ուժերը (Վահրամ Փափազեան, Հրաչեայ Ներսիսեան, Մկրտիչ Ջանան) պիտի նուիրէր արդէն արևելահայ բեմին:

19-րդ դարի սկզբներին Կ.Պոլսում ծաղկում ապրեց պարբերական մամուլը: 1832-ից մինչև 1918 թ. այստեղ լոյս է տեսել 250 անուն պարբերական, իսկ 1918-ից մինչև մեր օրերը՝ շուրջ 150 անուն:

«Մեղու», «Թատրոն», «Բանասէր» և այլ պարբերականների շուրջ ձևաւորուել է արևմտահայ հրապարակախօսութիւնը, որի լաւագոյն ներկայացուցիչներից էին Յ. Սվաճեանը, Գ. Օտեանը, Ե. Տեմիրճիպաշեանը և այլք:

Հայ մշակոյթի և գրականութեան զարգացմանը մեծ նպաստ է բերել «Մասիս» օրաթերթը (1852-1908): Արևմտահայ գրականութեան ամենախոշոր դէմքերը՝ Գ. Զոհրապը, Երուխանը, Ե. Օտեանը, Լ. Բաշալեանը, Հրանդը և այլք աշխատակցել են թէ՛ «Մասիս» և թէ՛ «Արևելք» ու «Հայրենիք» թերթերին:

Արևմտահայ գրականութեան զարգացմանն իրենց նպաստն են բերել «Ոստան», «Նաւասարդ», «Մեհեան», «Քուլիս» գրական-գեղարուեստական հանդէսները, հայ հանրագիտարանային լաւագոյն հրատարակութիւններից մէկը՝ Թէոդիկի «Ամէնուն տարեցոյցը»: Կ.Պոլսի կարևոր թերթերից էին նաև Բ. Քեչեանի «Բիւզանդիոնը» և Քասիմի հիմնադրած և մինչև այսօր հրատարակուող «Ժամանակը»:

Պոլսոյ բարբառի հիման վրա ձևաւորուեց գրական արևմտահայերէնը, որով ստեղծուեց արևմտահայ հարուստ գրականութիւնը (Յ. Պարոնեան, Պ. Դուրեան, Մ. Պէշիկթաշլեան, Ծերենց, Տ. Կամսարական, Գ. Զոհրապ, Ե. Օտեան, Երուխան, Մ. Զարիֆեան, Մ. Մեծարենց, Սիամանթօ, Դ. Վարուժան, Ռ. Սևակ, Զ. Եսայեան, Յ. Մնձուրի, Ռ. Զարդարեան):

Պոլսի Դրամատիկ թատերախումբը (1919)

Հայերը Թուրքիայում համբաւաւոր վաճառականներ էին, և Արևելքի ու Արևմուտքի ճամփաբաժան Կ.Պոլսի առևտրի գերիշխող մասը մշտապէս գտնուում էր նրանց ձեռքին:

18-րդ դարից պոլսահայ ամիրաներն էին կառավարում կայսրութեան տնտեսութեան կարևոր գերատեսչութիւնները: Նրանք էին կատարում երկրի հարկահաւաքութիւնը, բոլոր գործարքները, վարկեր տրամադրում վաճառականներին, պետական գրասենեակներին, յաճախ նաև՝ սուլթաններին: Տիզեանները սերնդէ սերունդ սուլթանների ոսկերչապետներն էին և կառավարում էին տերութեանը պատկանող ոսկու և արծաթի պահեստները: Տատեան գերդաստանին էին յանձնուած զինագործարանները, որոնք վառօդ էին պատրաստում օսմանեան ողջ բանակի համար: Նրանք էին կազմակերպում նաև երկրի թղթի արդիւնաբերութիւնն ու բանակի հանդերձաւորման գործը:

Կ.Պոլսի ճարտարապետական կոթողները մեծ մասամբ ծնունդ են հայ

Արշակ Պէնկլեանի թատերախումբը

հանճարի: Դեռ Բիւզանդական շրջանում Տրդատ ճարտարապետը վերանորոգեց Ս. Սոֆիայի տաճարի գմբէթը: Սուլէյմանիէի հրաշակերտ մզկիթը, որ Օսմանեան Ս. Սոֆիա են կոչում, գործն է հայազգի Սինան Մեծ ճարտարապետի: Շուրջ երկու դար Պալեան գերդաստանի անդամները վարեցին արքունի ճարտարապետի պաշտօնը և Կ.Պոլիսը զարդարելով իրենց հրաշակերտներով՝ մեծ փառք բերեցին Թուրքիային: Պալեանների արուեստը երևոյթ էր Թուրքիայի գեղարուեստական կեան-

Մարտիրոս Մնակեան

Ակնիւ Հրաչեայ

Պետրոս Դուրեան

Միսաք Մեծարենց

Յակոբ Պարոնեան

Գրիգոր Զոհրապ

քում: Նրանք եւրոպականացրին թուրքական ճարտարապետութիւնը և նոր ուղի հարթեցին նրա հետագայ զարգացման համար: Պալեանների կողքին Յ. Սէրվէրեանը, Գ. և Կ. Օտեանները նոյնպէս կրեցին արքունի ճարտարապետի տիտղոսը և իրենց տքնութեան բաժինը բերեցին սուլթանների մայրաքաղաքը պճնելու համար: Մանաս հայ նկարիչների ընտանիքի անդամները եղել են սուլթանների պալատական նկարիչներ: Թուրքական արուեստում նրանք առաջին դիմանկարիչներն էին: Աբդուլլահների հայ ընտանիքը Թուրքիայի լուսանկարչութեան սկզբնաւորողը եղաւ: Ջիլճեանները երկու դար շարունակ, սերնդէ սերունդ, ծնծղաներ պատրաստեցին, որոնք իրենց նուրբ հնչողութեամբ գերազանցեցին եւրոպականներին և միջազգային ցուցահանդէսներում արժանացած շքանշաններով փառք բերեցին երկրին:

Կ.Պոլսում մեծ թիւ էին կազմում հայ արհեստաւորները, և չկար արհեստ, ուր նրանք չփայլէին: Շատ արհեստներ, որոնք ծաղկել են Թուրքիայում և փառք բերել այդ երկրին (արծաթագործութիւն, խեցեգործութիւն, գորգագործութիւն, ասեղնագործութիւն և այլն), գլխաւորապէս հայ ստեղծագործ մտքի արդիւնք են:

Պօղոս Արապեանը նախախնամական դեր կատարեց թուրքական տպագրութեան համար՝ հնարելով նոր տառատեսակներ, որոնք յետոյ «արապօղլու» պիտի յորջորջուէին: Յովհաննէս Միւհէնտիսեանի ստեղծած տառերը յեղաշրջում առաջացրին թուրքական տպագրական արուեստում: Դրանք մինչ 1928 թուականը օգտագործուել են և կոչուել Միւհէնտիսեան

Ստեփան Բաբէլեան, Շահան Բէրբէրեան, Սիամանթօ

Մկրտիչ Պէշիկթաշլեան

Սիամանթօ

Դանիէլ Վարուժան

տաներ: Թուրքերը նրան համարել են իրենց Գուտեմբերգը:

Հայերը մեծ տեղ ունեն Թուրքիայի բժշկութեան պատմութեան մէջ: Ամիրդովլաթ Ամասիացին (15-րդ դ.) Մուհամմէդ Ֆաթիհի պալատական բժիշկն էր և կրում էր «Մարահբաշի ռամադան» (Մեծ բժշկապետ) տիտղոսը: Արքունի բժիշկներ եղան նաև Շուշանեանները: Հայ բժիշկների նախաձեռնութեամբ Կ.Պոլսում հիմնուեց նոր բժշկական վարժարան և Բժշկական Կայսերական ընկերութիւնը: Շատերը պետական բարձր պաշտօններ վարեցին և եղան հիւանդանոցների բժշկապետեր: Հայ բժիշկների մի ստուար մասը ծառայեց թուրքական բանակում, նրանցից 10 ակնառուները արժանացան փաշայի տիտղոսի, մի մասն էլ հասաւ գնդապետի աստիճանի:

Զափազանց մեծ էր հայերի նպաստը Թուրքիոյ կրթական գործին: 21 հայ ականաւոր բժիշկներ դասաւանդեցին Կալաթա-Սերայի բժշկական վարժարանում:

Թուրքիոյ շերամաբուծութիւնը գիտական զարգացման հիմքի վրայ դրեց Գ. Թորգոմեանը՝ հիմնելով Պրուսայի Շերամաբուծական վարժարանը, որի տնօրէնն ու ուսուցչապետը եղաւ 35 տարի: Այստեղ բոլոր մասնագէտ ուսուցիչները հայեր էին: Իրաւաբանական վարժարանի դասախօսական կազմում հայերը ստուար թիւ էին կազմում: Այստեղ փայլեցին Յ. Սագըզը, Կ. Շահպազը, Հ. Խոսրովեանը, Մ. Փորթուգալը, Գ. Զոհրապը: Գեղարուեստ-

Յակոբ Մնձուրին մի խումբ պոլսահայ մտաւորականների հետ



Տիգրան Զուխաճեան

Կոմիտաս

տական վարժարանի հիմնադիրներից էր նկարիչ և քանդակագործ Երուանդ Ոսկանը, որը երկար տարիներ ամենահեղինակաւոր անձն էր այստեղ:

Հայերի խորհրդով և գործուն մասնակցութեամբ ստեղծուեցին Օսմանեան դրամատունը, Օսմանեան համալսարանը, Իրաւաբանական վարժարանը, Հանրային Պարտուց Վարչութիւնը, Օսմանեան Քաղաքային օրէնքը, Պետական խորհուրդը, Կալաթա-Սերայի Սուլթանիէն և այլն:

Հայերը աչքի ընկնող, նոյնիսկ գլխաւոր դեր պիտի կատարէին այն նախարարութիւններում, ուր մասնագիտական հմտութիւն էր անհրաժեշտ: Որպէս պետական գործիչներ փայլեցին Արտաքին գործոց նախարարութիւնում: Հիմնադրման օրուանից մեծ թուով հայեր էին աշխատում թղթակցութեան և թարգմանական դիւաններում: Հիւպատոսներ և դեսպաններ եղան եւրոպական երկրներում, վարեցին փոխնախարարի և նախարարի պաշտօններ:

«Հայերն իրենց ստորագրութիւնները դրած են հոյակապ մզկիթներու, անզուգական յախճապակիներու, եբենոսէ ամենանուրբ միմպէրներու վրայ, և ինչպէս որ նպաստած են Անատոլուի տնտեսական զարգացման, աշխատած են զայն գեղարուեստական գործերով զարդարելու: Հայ ճարտարապետութեան կեդրոններում մէկէն՝ Անիէն հայկական ոճին ազդեցութիւնը եկած է մեր երկիրը, և անոր դրոշմը կը տեսնենք մեր մզկիթներուն ու մեր մէտրէսէներուն վրայ: Մեր օրով իսկ ոչ միայն Վոսփորի ակունքը պճնող պալատներուն վրայ, այլ և մեր դամբարաններուն, մեր շիրմակոթողներուն, մեր գլխու փաթթոցներուն, մեր գրպանի կիտուածազարդ ժամացոյցներուն վրայ, ամէն տեղ, ամէն բանի վրայ կը տեսնենք կնիքը անոնց արուեստագիտական տաղանդին», գրել է Թուրքիայի հանրապետութեան Լուսաւորութեան նախարար Համտուլլահ Սիւպհին:

Կոմիտասի «Գուսան» երգչախումբը (1911)

Արևմտահայութեան կեանքում անաւոր եղան Համիդ Բ-ի գահակալութեան տարիները: Դրանք զուգադիպեցին այն պոռթկումների շրջանին, որ հայ ժողովուրդը ունեցաւ տեղ-տեղ՝ իր ցասումն արտահայտելով այն վարչակարգի դէմ, որ հետզհետէ դառնում էր զարհուրելի: Համիդն արգելեց հայերի մուտքը Կ.Պոլիս, ուր հայ բնակչութեան թիւը հասել էր 250 հազարի: Հայկական թատրոնները, կրթական հաստատութիւնները, մշակութային ընկերութիւնները իրենց ծաղկունքի մէջ արգելուեցին կառավարական որոշումներով: Հայ մտաւորականներն ու ազգային գործիչները բանտարկուեցին կամ աքսորուեցին երկրից: Արգելուեցին Ազգային սահմանադրութիւնը և ազգային գաղափարաբանութեան հետ առնչուող բոլոր նախաձեռնումները: Դրանից յետոյ Համիդն անցաւ հայութեան ֆիզիկական բնաջնջման: 1896 թ. օգոստոսին Կ.Պոլսում կազմակերպուած անաւոր կոտորածի զոհ դարձան 10 հազար հայեր:

Կ.Պոլսի մշակութային կեանքն աշխուժացաւ 1908 թ. Հիւրիէթի հռչակումից յետոյ: Վերականգնուեցին հայկական դպրոցները, հրատարակչութիւնները, մշակութային ընկերութիւնները և միւս ազգային հաստատութիւնները և սկսեցին աւելի արդիւնաւէտ գործել: Թատերական կեանքն աշխուժացաւ Աբէլեան-Արմէնեան, Զարիֆեան-Սևումեան թատերախմբերի այցելութիւններով, Վահրամ Փափազեանի ելոյթներով: Կ.Պոլսի երաժշտական կեանքն իր ծաղկունքին հասաւ Կոմիտասի անմիջական մասնակցութեամբ: Վերջինս կազմակերպեց 300 հոգուց բաղկացած «Գուսան» երգչախումբը, համերգներով և բանախօսութիւններով ամենուրեք տարածեց հայ երգը: Կարճ ժամանակաշրջանում Կոմիտասը պատրաստեց բազում աշակերտներ (Բ. Կանաչեան, Մ. Թումաճան, Վ. Սարգսեան, Վ. Սրուանձտեան, Հ. Սէմէրճեան), որոնք շարունակեցին նրա գործը:

Վարդգէս Ա կաթողիկոսը և Շնորհք պատրիարքը Գրականութեան և արուեստի թանգարանում (1969)

Հայ Պոլիսը հոգեկան վերելքի պահին էր, իր փառքի գագաթին, երբ հասաւ դժնդակ 1915-ը, և հինգ դարերի կուտակուած յոյսերը փլուզուեցին մէկէն...

Թուրքական գեհենից փրկուած մտաւորականները զինադադարից յետոյ վե-

Թուրքիոյ Հայոց Պատրիարքարանի շէնքը Կ.Պոլսում

բաղարձան Կ.Պոլիս, և կրկին եռուզեռ սկսուեց մշակութային կեանքում: Սակայն Քէմալի կառավարութիւնը պոլսահայութեանը ստիպեց ապրել մահուան սարսափի մէջ, և շատերը հեռացան Կ.Պոլսից:

Պոլսահայութիւնը որպէս կրօնական համայնք շարունակեց ապրել իր ազգային և մշակութային արժէքները պահպանելու և զարգացնելու սահմանափակ իրաւունքներով:

Այսօր պոլսահայութիւնը կապուած է իր եկեղեցուն, իր աւանդոյթներին և մեծ հոգատարութեամբ է վերաբերւում իր վարժարաններին և հաստատութիւններին: Դարերի ընթացքում կաթոլիկ և բողոքական եկեղեցիներից բացի այստեղ կառուցուած 55 հայադաւան եկեղեցիներից այսօր գործում են 32-ը: Դրանք ունեն իրենց դըպրաց դասերն ու երգչախմբերը: Եկեղեցիների շուրջ ստեղծուած են թաղային խորհուրդներ, հոգաբարձութիւններ, խնամակալութիւններ: Գործում է 18 վարժարան, որոնք նախակրթական, միջնակարգ և լիցէյական կրթութիւն են տալիս: Համայնքն ունի հինգ բարեսիրական հաստատութիւններ, Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցը, Գալֆայեան աղջկանց և Գարակէօզեան տղայոց որբանոցները, Կեդրոնական վարժարանը, Ս. Խաչ դպրեվանքը: Դպրոցներին կից ստեղծուած են սանուց միութիւններ, որոնք ունեն իրենց մամուլը («Սան», «Հանդէս մշակոյթի») և թատերախմբերը: Գործում է ուսումնական խորհրդին փոխարինած Ուսուցչաց միութիւնը: Հրատարակւում են «Ժամանակ», «Մարմարա» օրաթերթերը, «Ակօս» շաբաթաթերթը: Պատրիարքարանը լոյս է ընծայում «Լրաբեր» տեղեկատուն և «Շողակաթ» պատմաբանասիրական հանդէսը, իսկ Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցը՝ համանուն ամսագիրը:

Պոլսահայութեան ստեղծագործ մտաւորականութեան ներկայացուցիչներն են բանաստեղծներ Զահրատը, Զարեհ Խրախունին, Վարդ Ծիկաները, Իգնա Սարըալանը, արձակագիր, հրապարակախօս Ռոպէր Հատտէճեանը, թատերագիր Արման Վարդանեանը, երգահան Սիրվարդ Գարամանուկեանը, դաշնակահար Սայաթ Զամանը և ուրիշներ:

Այսօր էլ իր հայանպաստ գործունէութիւնն է շարունակում Թուրքիոյ Հայոց Պատրիարքարանը, որն առաջնորդում է պատրիարք Նորին Ամենապատուութիւն Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանը:

ՀԱՅ ՊՈԼԻՍ

Տեքստը՝ ԱՆԱՀԻՏ ԱՍՏՈՅԵԱՆԻ
Նկարիչ-ձևաւորող՝ ԳՐԻԳՈՐ ԹՈՐՈՍԵԱՆ
Էջադրումը՝ ԳՈՒՐԳԷՆ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ

Գրականութեան և արուեստի թանգարանի
հրատարակչութիւն, Արամի 1
ԵՐԵՒԱՆ - 2000